9980

2011

655.4
S-30

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

(1892 թ. Մարտի 20 – 1893 թ. Յուն. 1)

Տասներեքերորդ տարեշրջան

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մ. Շարաձէ, Նիկ. փ. տ. 21
Типографія М. Шарадзе, Никол. 21
1893

17352

Дозв. цензурою, Тифлисъ, 26-го Февраля 1893 г.

655.4
Ш-30
ար.

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

(1892 թ. Մարտի 20—1893 թ. Յունուարի 1)

Ցասներեքերորդ տարեշրջան

1006
29624

---

§ 31. ԿԱՆՈՆԱԴՐ.—«Տարեկան ընդհանուր ժողովում ա. Վարչութեան ատենադպիրը ներկայացնում է ընդհանուր հաշիւ ընկերութեան լրացած տարուայ աշխատութեանց, կարգադրութեանց, կայքի և դրութեան մասին. բ. ընտրւում են պաշտօնատար անձինք, գ. հաստատւում է Վարչութեան ծախուց նախահաշիւը և դ. ընտրւում են պատուոյ անդամները»։

1892 Թ. ՄԱՐՏԻ 20-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՑ ՅԵՏՈՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ ՀԵՏԵՒԵԱԼՆ ԷՐ.

Վարչութիւն

Աղեքսանդր Քալանթար (նախագահ)
Ստեփան Զելինսկի (փոխ-նախագահ)

Ъ7002

Խաչատուր Խաչատրեան (գանձապահ)
Նիկողայոս Տէր-Սուետիքեան (քարտուղար)
Յակոբ Քոչարեան (գրապահ)
Իշխ. տ. Մարիամ Թումանեան (անդամ)
Սրշակ Տէր-Գրիգորեան (անդամ)

Խմբագրական մասնաժողով

Լեւոն Սարգսեան
Սրշակ Բարխուդարեան
Յովհաննէս Տէր-Մարկոսեան
Խաչատուր Մալումեան
Աբրահամ Դաստակեան
Սամուէլ Բալաղեան
Ստեփան Մալխասեան:

Ամառուայ արձակուրդներից յետոյ խմբագրական Մասնաժողովից դուրս գնացին պ. պ. Լեւոն Սարգսեան և Սրշակ Բարխուդարեան, քաղաքից հեռանալու պատճառով, և Մասնաժողովը շարունակում էր վարել իւր գործերը մնացեալ հինգ անդամներով։—Իսկ վարչութիւնից հոկտեմբեր ամսի սկզբներին հրաժարական տուեց նորընտիր քարտուղար պ. Ն. Տէր-Սուետիքեան, և քարտուղարի պաշտօնը՝ մինչև նոր ընտրութիւնները՝ յանձն առաւ կատարել Ընկերութեանս գրապահ պ. Յակ. Քոչարեանը։

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տարուայ ընթացքում, այսինքն մարտի 20-ից մինչև 1893 թ. յունուարի մէկը վարչութիւնը հրաւիրել է մի արտակարգ ընդհանուր ժողով և ունեցել է 28 վարչական նիստեր։ Հինգ տարուայ սկզբներում վարչութիւնը իւր մի քանի նիստերում զբաղուեց կազմելով առանձին առաջարկութիւնների մի ծրագիր և ապա մայիսի 16-ին հրաւիրեց մի արտակարգ ընդհանուր ժողով, որը, քննելով վարչութեան առաջարկները, հետևեալ որոշումները կայացրեց.

1) «Ընկերութեան հաշուետարին սահմանել յունուարից յունուար».

2) «Ընկերութեան գործունէութեան և դրամահաշուի տեղեկագիրը իւրաքանչիւր տարի տպագրել և ուղարկել քաղաքի անդամներին տարեկան ընդհանուր ժողովից առնուազն 3 օր առաջ».

3) «Ընկերութեան իւրաքանչիւր անդամ իւր ազատ ընտրութեամբ տարեկան 5 ր. գիրք է ստանում։ Այն անդամը, որ չէ վճարել իւր անդամավճարը, իրաւունք չունի գիրք ստանալու։ Պատուի անդամին տրւում է մի մի օրինակ ընկերութեան հրատարակութիւններից։ Մշտական անդամները նմանապէս տարեկան 5 ր. գիրք են ստանում գրուած օրից սկսած։ Գաւառական անդամներին գրքեր ուղարկելը վարչութիւնն իւր վրայ է վերցնում։ Ով իւր անդամակցած տարուայ ընթացքում իրեն հասանելի գրքերը չէ ստացած, նրան վեց ամիս ժամանակ է տրւում

գրքեր ստանալ մինչև իւր անդամակցած ժամանակը լոյս տեսած գրքերից»։

4) «Պարտաւորական է Ընկերութեան բոլոր հրատարակութիւններից մշտական երկ-երկու օրինակ ուղարկել Էջմիածնի Մայր գրադարանին և Գէորգեան ճեմարանի մատենադարանին»։

5) «Բոլոր հասարակական, ազգային, Ռուսաստանի և արտասահմանի հայ ուսանողութեան, հայոց թեմական, ծխական դպրոցների գրադարաններին վարչութիւնն իրաւունք ունի ուղարկել իւր բարեհայեցողութեամբ Ընկերութեան հրատարակութիւններից նուէր»։

6) «Ընդհանուր ժողովների որոշումները նոյն նիստում պէտք է կարդացուեն իրենց վերջնական ձևակերպութեամբ»։

7) «Ընկերութիւնն իւր դրամական կարողութիւնից չի կազմում անձեռնմխելի կամ անշարժ դրամագլուխ»։

Ծանօթ. «Այն գումարները, որոնց նուիրողները չեն պայմանաւորում, դառնում են շրջանառու դրամ»։

8) «Վարչութիւնն իրաւունք ունի միաժամանակ ոչ աւելի քան 1000 ր. գիրք ապառիկ ցրուել գաւառներում վաճառելու համար»։

9) «Նոր անդամները, մինչև չվճարեն իրենց անդամավճարը, չեն կարող մասնակցել ընդհանուր ժողովներին»։

Մարտի 20-ի Ընդհանուր ժողովից յետոյ վարչութիւնն իւր առաջին նիստում հրաւիրեց նախկին քարտուղար արժ. Գիւտ քահ. Աղանեանցին և գանձապահ պ. Նիկողայոս Գրիգորեանցին դիւանը և դրամարկղը նորընտիր քարտուղարին և գանձապահին յանձնելու համար։ Արժ. Գիւտ քահ. Աղանեանը յանձնեց պ. Ն. Տէր-Աւետիքեանցին իւր մօտ եղած բոլոր թղթերը և մատեանները, որը և վաւերացրեց վարչութիւնը։ Գանձապահ պ. Ն. Գրիգորեանը յանձնեց դրամարկղը վարչութեան, որը յետոյ յանձնեց նոր գանձապահ պ. Խ. Խաչատրեանին։

Տարուայ ընթացքում Վարչութեան գործունէութիւնը արտայայտուել է հետևեալ գլխաւոր կողմերով.

Ա. Ընկերութեան նիւթական դրութիւնը բարւոքելու հարցը։

Բ. Գրքերի հրատարակութեան գործը.

Գ. Ընկերութեան դիւանը և դրամարկղը կանոնաւորելու խնդիրը և մի քանի ներքին վարչական խնդիրներ։

Ա.

Ընկերութեան դրամական դրութիւնը բարձրացնելու համար Վարչութիւնն աշխատել է 1) անդամների թիւը շատացնել և 2) գրքերի վաճառումը աւելի զարգացնել։

1) Անդամների թիւը, որ անցեալ 1891 թ. 111 էր, ներկայ թուականին հասաւ մինչև 233 միայն Թիֆլիսում։ Բացի դրանից վարչութիւնն աշխատում էր առանձնապէս Ընկերութեան անունը տարածել և գաւառներում։ Դրա համար զանազան տեղերում ընտրուեցան *աշխատակից* անդամներ, որոնց գլխաւոր գործն էր՝ թէ Ընկերութեանս համար անդամներ գտնել գաւառում և թէ գրքեր տարածել։

Աշխատակից անդամների ցուցակն ընթերցողները կգտնեն

ներքևում։ Դոցանից շատերն արդարացրին Վարչութեան նոցա վերայ դրած յոյսը և դոցա շնորհիւ է որ 1892 թ. Ընկերութեանս գաւառական անդամների թիւը հասաւ մինչև 118-ի։

Նոյն 1892 թ. ընթացքում Վարչութիւնն իւր նախկին մշտական անդամներին աւելացրեց և նոր երեքը։ Դոքա են 1) պ. Իսահակ Ծամհարեան—Մոսկվայում. 2) պ. Սմբատ Շահ-Ազիզ նոյն տեղում, և 3) պ. Միքայէլ Արամեան—Բաղուում։

2. Գրքերի վաճառման գործը գաւառում յառաջ տանելու խնդիրը Վարչութեանս խորհրդածութիւնների գլխաւոր առարկաներից մէկն էր։ Աշխատակից անդամները, որոնց մասին մի փոքր առաջ յիշատակեցինք, այս դէպքում ևս բաւականաչափ նպաստեցին Ընկերութեանս այդ ձեռնարկած գործում։ Նոցանից շատերն ամենայն եռանդով տարածում էին ընկերութեան հրատարակութիւններն առանց որ և է զեղչ հանելու միայն ճանապարհածախսը Ընկերութեան վերայ ընկնելով։ Վարչութիւնն օգտուելով 1892 թ. մայիսի 16-ի ընդհ. ժողովի տուած թոյլտուութիւնից ուղարկում էր իրեն յայտնի վստահելի անձանց գրքեր ապառիկ մինչև 1000 ր. ընդհանուր առմամբ, և այդ ուղարկած գրքերի հաշուին ստացած գումարները մինչև տարուայ վերջը հասաւ 714 ռուբլու։ Ոչ մի նիւթական կորուստ դեռ ևս Ընկերութիւնը չի ունեցել։ Ի հարկէ գործը դեռ նոր լինելով աշխատակից անդամներից շատերի համար, հաշիւներն այնքան էլ ճիշտ իր ժամանակին չեն հասցնում, կամ թէ չէ պարզ չեն ցոյց տալիս թէ որ գրքից որքան վաճառուած է, որքան անդամներին տուած. այլ միայն ընդհանուր հաշուով ուղարկում են Ընկերութեան հասանելիք գումարները համաձայն գրապահի առանձին ուղարկած հաշիւների։ Այստեղ պէտք է պարզել, որ գաւառական իսկական անդամներին հասանելիք գրքերը շատ անգամ տալիս էին աշխատակից անդամները, ի հարկէ տեղեկացնելով դրա մասին Վարչութեանը։

Բացի իրեն աշխատակից անդամներից Վարչութիւնը շատ անգամ պատուէրներ էր ստանում և կողմնակի անձանց կողմից. բայց այդպիսիների վերաբերութեամբ Վարչութիւնը որոշել էր և յայտարարել, որ առանց երաշխաւորութեան ապառիկ ոչ ոքի ինքը գրքեր չէ ուղարկում, իսկ ցանկացողները կարող են գնել վերադիր կամ կանխիկ վճարով, և այս դէպքում Վարչութիւնը պատրաստ է անել 20% զեղչ և առնել իւր վերայ ճանապարհածախսը։

Այստեղ դրւում է գրապահի ներկայացրած հաշուեցուցակը, որտեղից երևում է թէ որքան արժողութեամբ ուղարկուած են գրքեր զանազան տեղեր ապառիկ, որքան այդ տեղերից ստացուած են գումարներ և որքան մնում է դեռ ևս ապառիկ։

Որ քաղաքը	Որքան գումարի ուղարկուած են գրքեր.		Որքան գումար ստացուել է.		Որքան գրքեր դեռ մնում են ապառիկ.		Դանձնաթ.
	Ր.	Կ.	Ր.	Կ.	Ր.	Կ.	Ընդ գրքերից դուրս մնացածները անդամները կամ նրանց կողմից կանխիկ կամ ապառիկ։
Բաղու . . .	677	80	254	75	423	05	
Դիլիջան . . .	189	75	94	70	95	05	
Երևան . . .	143		95	35	47	65	
Էջմիածին . .	176	60	89		87	60	
Վերին-Ագուլիս .	123	20	43	75	»	»	
Ղարաքիլիսայ .	84		»	»	84		
Ալեքսանդրապոլ .	32		»	»	32		
Գանձակ . . .	120	70	95	60	»	»	
Ախալքալակ . .	31		21	05	9	95	
Ղարասու-Բազար.	69	70	20		49	70	
Փոթի	11	50	»	»	11	50	
Մոսկվա . . .	62		»	»	12		
Ընդհան. գումարը	1721	25	714	20	852	50	

Այսպիսով տարուայ շրջանում գաւառը ապառիկ ուղարկուել են գրքեր ընդամենը 1721 ր. 25 կ. արժողութեամբ։ Այդ հաշուից տարուայ ընթացքում ստացուել է ընդամենը 714 ր. 20 կ. մնում է գաւառում ապառիկ գրքեր ներկայումս ընդամենը 852 ր. 50 կ. արժողութեամբ։

Կանխիկ կամ վերադիր վճարով 20% զեղչով 1892 թ. ընթացքում վաճառուած է թէ քաղաքումս և թէ գաւառում գրքեր հետևեալ արժողութեամբ.

	ր.	կ.
Շուշի	137	62
Ղարս	118	72
Էջմիածին	101	06
Ալեքսանդրապոլ	48	60
Բաքու	114	25
Երևան, Բաթում, Նուխի, Տրապիզոն և Ախալցխա	17	15
Քաղաքումս վաճառուած է թէ գրասենեկում և թէ ցրուիչի ձեռքով	129	01
Ընդամենը ուրեմն այդ ձևով վաճառուած գրքերից ստացուած է	666	41

Բացի դրանից Վարչութիւնը թէ Թիֆլիզում և թէ գաւառներում աշխատակից անդամների շնորհիւ փորձեր էր անում շրջիկ գրավաճառներ գտնելու, և այդ փորձերը շատ տեղերում յաջողութիւն ունեցան, ինչպէս օր. Բագուում և Էջմիածնի գաւառում։

Թիֆլիզի գրավաճառ Խիդդեկելը խնդրելով Վարչութիւնից Ընկերութեան հրատարակութիւնները վաճառելու համար 20% զեղչով, վարչութիւնը որոշեց տալ նրան գրքեր միայն ոչ աւելի քան 500 ր. և այն պայմանով, որ հաշուեմ-

տուութիւնը լինի ամենայն ամիս։ Գրքերը տրուեցան առանձին ցուցակով։ Գրավաճառանոցի տարուայ հաշուեցուցակից երևաց որ ընդամենը վաճառուել են գրքեր 11 ր. 10 կոպ.։

Տարուայս ապրիլ ամսին Ընկերութեան գրապահ պ. Յակ. Քոչարեանը տեսաւ գրքերի տարեկան հաշիւը Կենտրոնական գրավաճառանոցի հետ և ներկայացրեց Վարչութեանս։ Այդ հաշուից երևաց, որ տարուայ ընթացքում գրավաճառանոցը վաճառել է գրքեր ընդամենը 1414 ր. 99 կոպ. արժողութեամբ։ Ծախուած գրքերի գումարից գրավաճառանոցը հանեց 25% զեղչ, այսինքն 353 ր. 75 կ. և այլ ծախքեր 18 ր. 33 կ. զուտ գրքերի հասոյթ Վարչութիւնս գրավաճառանոցից ստացաւ 1042 ր. 91 կ. Այդ հաշիւը ստանալով Վարչութեան մէջ խնդիր ծագեց %-ների մասին, որովհետև առաջ Ընկերութիւնը գրավաճառանոցին զիջում էր 20% իսկ 1891 թուի հոկտեմբերի 17-ից յետոյ Վարչութեան առանձին օրագրութեամբ որոշուեց զիջել այնուհետև 25%։ Այդ առիթով Վարչութիւնը որոշեց՝ մինչև այդ թիւը յանձնուած գրքերը հաշուել 20% զեղչով, իսկ դրանից յետոյ յանձնած գրքերը 25%։ Այդ բովանդակութեամբ մի թուղթ գրեց գրավաճառանոցին Վարչութիւնս, և ի պատասխան դրան ստացաւ լրացուցիչ գումար տասն ր.։

Բացի անդամների թիւը բազմացնելը և գրքերի վաճառումը Ընկերութեան գրական միջոցները շատացնելու համար Վարչութիւնը տարուայ ընթացքում տուեց մի գրական-երաժշտական երեկոյթ և մի սովորական պարահանդէս։ Երեկոյթը տրուեց ապրիլի 9-ին բանաստեղծ Սմբատ Շահ-Ազիզի յոբելեանի առիթով և ի պատիւ նորան։—Իսկ պարահանդէսը կայացաւ դեկտեմբերի 12-ին 1892 թուի։ Շնորհիւ

Իշխ. տիկ. Մ. Թումանեանի և տիկ. Օ. Անանեանի սիրալիր աջակցութեանը պարահանդէսն անցաւ շատ յաջող, զուտ արդիւնք մնաց Ընկերութեանս համար պարահանդէսից 770 ռուբլի։

Պատահական եկամուտ տարուայ ընթացքում Ընկերութիւնս ունեցաւ հետևեալ տեղերից. 1) Մոսկվայից. Մեծ. պ. Սմբատ Շահ-Ազիզը իւր յօբելեանի առիթով նուիրեց Ընկերութեանս 400 ր.։

2) Բագուից օր. Եղիսաբեթ Լալայեանը նուիրեց Ընկերութեանս 50 ռուբլի։

3) Հանգուցեալ Պ. Շանշեանի մահարձանի համար կարգուած մասնաժողովը մի գրութեամբ առաջարկեց Վարչութեանս մահարձանի համար ժողոված գումարի աւելորդը 60 ր. 40 կ. այն պայմանով, որ եթէ երեք տարուայ ընթացքում պատրաստ լինի որ և է կենսագրութիւն Շանշեանի, Ընկերութիւնս վերադաձնի այդ գումարը իրեն տոկոսով Մասնաժողովին, իսկ եթէ այդ միջոցին չպատրաստուի և չառաջարկուի որ և է կենսագրութիւն, այն դէպքում գումարը նուիրւում է Ընկերութեանս։ Գումարը որոշուեց ընդունել առաջարկած պայմանով։

Գրքերով Ընկերութիւնս ստացաւ հետևեալ նուէրները.

1) Լազարեան ճեմարանի պրոֆ. պ. Գրիգոր Խալաթեանը Վարչութեանս ուղղած մի գրութեամբ յայտնեց, որ ինքը՝ ի նկատի առնելով որ Ընկերութիւնս իր ծրագրի մէջ մտցրել է և ազգագրական նիւթեր հրատարակելը, նուիրում է 100 օրինակ իւր «Ծրագիր հայ ազգագրութեան» գրքից Վարչութեանս տրամադրութեանը։ Վարչութիւնը իւր նոյեմբերի 13-ի նիստում որոշեց բաժանել այդ ծրագիրները գաւառներում

աշխատակից անդամների միջոցաւ ձեռնհաս անձանց օգտուելու համար։

2) Պ. Շիրվանզադէից Վարչութիւնս ստացաւ նուէր իւր «Տասն հինգ տարի առաջ» գրքոյկից 155 օրինակ։

3) Հանդ. Սմբատ Լալայեանից ստացուեց «Հետաքրքիր աղջիկ» վերնագրով գրքոյկից 90 օրինակ։

Մայիսի 16-ի ընդհանուր ժողովի որոշումների § 5-ին համաձայն Վարչութիւնս տարուայ ընթացքում ուղարկել է Ընկերութեանս հրատարակութիւններից ձրիաբար հետևեալ տեղերի գրադարաններին, որոնք գրաւոր կամ բերանացի դիմել են Վարչութեանը գրքեր խնդրելով. Սալմաստի, Թավրիզի, Վանի գրադարաններին, Մոսկվայի ուսանողներին, Նիւ-Եօրկի հայկական գրադարանին, Ժընեվի հայ ուսանողութեան գրադարանին, Թիֆլիզի Էժանագին գրադարանին և այլ հասարակական գրադարաններին։ Բոլոր գրադարաններին նուիրած գրքերի թիւը ընթերցողները կտեսնեն գրասլահի հաշուեցուցակից։—Նոյնպէս ուղարկուել են Ընկերութեան հրատարակութիւններից ձրիաբար Էջմիածնի Մայր Աթոռի և Ճեմարանի գրադարաններին։

Բ.

Հիմա անցնենք Ընկերութեանս գործունէութեան երկրորդ կողմին, այն է գրքերի հրատարակութեանը։

Հրատարակելիք գրքերի ուղղութեան և ծրագրի մասին դեռ անցեալ տարեկան ընդհանուր ժողովում երկար խօսակցութիւններ և առարկութիւններ եղան, և այդ առիթով ցանկութիւն յայտնուեց ծանօթանալու խմբագրական Մասնաժողովի բռնած ուղղութեան հետ գրքերի հրատարակու-

թեան խնդրում։ Մայիսի 16-ի ընդհանուր ժողովին ներկայ եղող անդամներին արչութիւնը բաժանեց Վառանձին թերթիկներով տպուած Խմբագրական Մասնաժողովի կարճառօտ բացատրութիւնը այն ծրագրի, որին ինքը կհետևի իւր գործունէութեան ընթացքում։ Ահա այդ ծրագիրը.

«Ընկերութեան կանոնադրութեան մէջ հրատարակութիւնների մասին ասուած է միայն հետևեալը.

§ 1 «Թիֆլիսի Ընկերութիւնը հայերէն գրքերի հրատարակութեան» հիմնւում է Թիֆլիսում և նպատակ ունի հրատարակել հայերէն լեզուով թէ ինքնուրոյն և թէ թարգմանած գրքեր.

§ 21. Խմբագրական Մասնաժողովը ընտրում է տպագրուելիք հեղինակութիւնները և նշանակում է հեղինակներին կամ թարգմանիչներին վարձատրութիւն դոցա աշխատութեան համար։ Առանց սորա վճռի ոչ մի գիրք չէ կարող հրատարակուել Ընկերութեան կողմից.

Ներկայ Խմբ. Մասն. իւր պարտքն է համարում ի գիտութիւն Ընկերութեանս անդամներին և հասարակութեան՝ ձևակերպել ընդհանուր գծերով թէ ինչ սկզբունքով և ինչ ուղղութեամբ է նա ղեկավարւում։ Նրա կարծիքով Հրատարակչական Ընկերութիւնը, իբրև իրական պահանջների ծնունդ՝ պէտք է ուշք դարձնի գլխաւորապէս մեր ժողովրդի ներկայ բազմակողմանի կարիքներին գրականութեան միջոցով գոհացում տալու վրայ։

Այդ կարիքները սոքա են.

1) Հայ ժողովուրդը ունի բազմաթիւ ծխական և թեմական դպրոցներ մօտ 14 հազար սովորողներով։ Այդ դպրոցների համար հարկաւոր են լաւ կազմուած դասագրքեր, մանաւանդ ընդհանուր զարգացուցիչ առարկաներից. գրականութեան, պատմութեան և բնական գիտութիւնների։ Հայ մանուկ սերնդի համար հարկաւոր են մանկական-պատանեկական ընթերցանութեան ընտիր գրքեր. ուսուցիչներին և դաս-

տիարակներին՝ ընտիր, կլասսիկ մանկավարժական գրուածքներ։

2) Հայ չափահաս ընթերցողների կօնտինգենտը մեզ մօտ կազմուած է գլխաւորապէս միջին կրթութիւն ունեցող և մեծ մասամբ հայոց դպրոցներում ուսած ինտելիգենցիայից և գրագէտ հասարակ ժողովրդից։ Ընթերցանութեան ընտիր գրքերի պահանջը ահագին է, մինչդեռ մեր գրականութեան մէջ եղած պաշարը շատ չնչին. այստեղից յառաջ է գալիս կարևորութիւն, որ Ընկերութիւնը ուշք դարձնի և չափահասների համար ընթերցանութեան գրքեր հրատարակելու վրայ։ Չափահասների ընթերցանութեան գրքերը կարելի է բաժանել երեք գլխաւոր տեսակի.

ա) Բելլետրիստիկական գրուածքներ, մանաւանդ այնպիսիք, որոնք ունին որոշ յառաջադէմ հասարակական ոգի, և կլասսիկներ.

բ) Գիտական գրքեր, որոնք բացատրում են բնութիւնը և տիեզերքը, և՝

գ) Գործնական նպատակներին ծառայող գրքեր, որոնք պէտք է օգնեն ժողովրդին հասկանալ իւր իրաւունքները, բարուոքել իւր ֆիզիքական և տնտեսական դրութիւնը։ Այս նպատակով պէտք է հրատարակուին զանազան իրաւաբանական և օրէնսդրական գրքեր, բժշկական բրոշիւրներ և գիւղատնտեսական հրատարակութիւններ։

3) Մեր ժողովրդի և հայրենիքի ուսումնասիրութեան վրայ մեր գրականութիւնը քիչ ուշադրութիւն է դարձնում։ Հրատ. Ընկերութեան նպատակներից մէկն էլ պէտք է լինի զարկ տալ այդ ուսումնասիրութեան։ Ժողովրդի և հայրենիքի թէ ներկայի և թէ անցեալի հետ ծանօթանալու և նոցա ուսումնասիրելու նպատակով Խմբ. Մասնաժողովս շարունակելու է իր ձեռնարկած «Ժողովրդագրական նիւթեր» ժողովածուների հրատարակութիւնը, ինչպէս և աշխարհագրական, պատմական և հայրենագիտական գրուածքներ լոյս ընծայելը։

Ամփոփելով վերև ասածները, կարելի է տեսնել որ ներկայ Խմբագրական Մասնաժողովը ուշք է դարձնելու գլխաւորապէս հետևեալ սերիայի հրատարակութիւնների վրայ.

1) Հայրենիքի և ժողովրդի ուսումնասիրութեան վերաբերեալ գրուածքներ.

2) Զափահասների ընթերցանութեան գրքեր.

ա. Բելլետրիստիկական, այս թւում և կլասսիկներ.

բ. Գիտական ժողովրդականացրած գրքեր.

գ. Գործնական նշանակութիւն ունեցող գրքեր (իրաւաբանական, բժշկական և գիւղատնտեսական)։

3) Մանկական—պատանեկական ընթերցանութեան գրքեր.

4) Դասագրքեր և մանկավարժական գրուածքներ.

Խմբագրական Մասնաժողովս պարբերաբար հրատարակելու է այն գրքերի ցուցակը, որոնց թարգմանութիւնը նա ցանկալի է գտնում, իսկ ժողովրդագրական նիւթեր հաւաքելու համար նա մատնանիշ կ'անի այն ծրագրների վրայ, որոնցով կարելի է աւելի գիտականօրէն հաւաքել ժողովրդագրական նիւթեր։»

Անցեալ տարուայ ընթացքում Վարչութեանս հրատարակութեամբ դուրս եկան հետևեալ գրքերը.

1. № 47. Հոսհոսի ձեռատետր։ Պատյտ մը Պոլսոյ թաղերուն մէջ։ Յակ. Պարոնեանի։

2. № 48. Քիմիա, Ռոսկոյի. թարգ. Ս. Մելիք-Ալլահվերդեանի։

3. № 49. Շչեդրինի երեք վէպիկներ.

4. № 50. Սասմայ ծռեր, ժողովածու Գարեգին սարկաւագի։

5. № 51. Ջաւախքի բուրմունք. ժողովածու Ե. Լալայեանի

6. № 52. Սպենսերի դաստիարակութիւն մտաւոր, բարոյական և ֆիզիքական։

7. № 53. Մռռան, Շմիդտի, թարգմ. Ա.նուշ. Քալանթարի։

8. № 54. Խան-Միրան, Սէյլանի։

9. № 55. Տարաս-Բուլբա Գոգոլի, թարգմ. Մ. Աբեղեանի։

10. № 56. Փշրանքներ, ժողովածու Գարեգին սարկաւագի։

11. № 57. Երկու քոյր, Ղ. Աղայեանի։

12. № 58. Խրիմեան Հայրիկ, Դրախտի ընտանիք։

13. № 59. Խրիմեան Հայրիկ, Սիրաք և Սամուէլ։

14. № 60. Փորձանքների բժշկարան, Բրօքերի։

15. № 61. Մակբեթ Շէկսպիրի, թարգմ. Ստ. Մալխասեանի։

1000/296294

Քանի որ սոյն տեղեկագրի մէջ Խմբագրական Մասնաժողովի զեկուցումից ընթերցողները կարող են աւելի մանրամասն ծանօթանալ Ընկերութեանս բռնած ուղղութեան հետ, Վարչութիւնս բաւականանում է միայն ներկայացնելով հրատարակած գրքերի ցուցակը, և աւելացնում է դրան, որ, ինչպէս այդ ակներև է նոյն իսկ այդ ցուցակից, Ընկերութիւնս ձգտել է որքան հնարաւոր է բազմակողմանի ուլայն ըմբռնել և իրագործել իւր նպատակը։ Նա չի կամեցել սահմանափակուել հրատարակելով միայն մի տեսակի գրքեր, այլ նա տուել է թէ նիւթեր, թէ մանկական և ժողովրդական ընթերցանելի գրքեր, թէ թարգմանութիւններ և թէ հայ նշանաւոր հեղինակների երկեր նոր տպագրութեամբ։ Վարչութեան մի շատ կարևոր ձեռնարկութիւն մընաց դեռ ևս անկատար։ Սպագայ Վարչութիւնը իհարկէ կաշխատէ որքան կարելի է շուտ իրագործել այդ միտքը։ Մեր խօսքը Գարագաշեանի «Բնական պատմութեան» տը-

պագրութեան մասին է։ Վարչութիւնը հարկ համարեց դիմել Պօլիս Գարագաշեանին խնդրելով նորա «Քննական պատմութեան» II հատորը։ Նորանից ստացուեց մի նամակ, որով նա յայտնում է իւր պատրաստականութիւնը գիրքը տալ Ընկերութեանս տպագրութեան համար։ Ստանալով այդ նամակը և ի նկատի առնելով, որ նոյն հեղինակի I հատորը արդէն սպառուած է, Վարչութիւնը կարևոր համարեց II հատորի հետ միասին վերատպել և I հատորը «Քննական պատմութեան»։ Այդ հարցի վերաբերմամբ բանակցութիւնները շարունակւում են։

Գ.

Վարչութիւնը իւր դիւանը և հաշուապահութեան ձեւերը կանոնաւորելու համար որոշել է. 1. Պահել մի մայր մատեան, որտեղ արձանագրել այբուբենական կարգով բոլոր անդամներին և նոցա ստացած մինչև 5 ր. գրքերի անունները։

2. Աշխատակից անդամների համար որոշուել է տպագրել առանձին տեսակ անդորրատետրեր, և դոցա համար ունենալ առանձին մատեան, որտեղ պիտի արձանագրուի, թէ ո՞ր աշխատակից անդամին ինչ համարով անդորրատետր է ուղարկուել։

3. Ընկերութեան հաշուապահութեան ձևերը կանոնաւորելու համար Վարչութիւնը մտցրեց առանձին մատեաններ վճարելու և վճարներ ընդունելու օրդրներով և բուներով։

4. Ընկերութեանս ուղարկած ձեռագիրների համար Վարչութիւնը որոշեց պահել մի մատեան, որտեղ կանոնաւոր կերպով գրուի ամեն մի ձեռագրի ստանալու մասին. Խմբագրական Մասնաժողովը ստանալով ձեռագիրը պիտի ստորագրէ դրա մասին մատեանում։

Տարուայ ընթացքում Վարչութիւնս պ. ոստիկանապետի պահանջմամբ տուեց հաշիւ Ընկերութեանս գործունէութեան մասին սկսած հիմնելու օրից մինչև 1892 թ.

Բացի դրանից Վարչութիւնը շարունակում էր այս տարի ևս ամենայն ամիս հաշիւ տալ պ. ոստիկանապետին Ընկերութեանս ել և մուտքի մասին։

Գրասենեկապետի գործերը շատանալով Վարչութիւնը հարկ համարեց աւելացնել նրա ռոճիկը մինչև 20 ր. ամսական, դնելով նրա վերայ առանձին օրագրութեամբ որոշ պարտականութիւններ։

Բացի բոլոր վերոյիշեալ ներքին խնդիրներից Վարչութիւնն իբրև Ընկերութեան ներկայացուցիչ մասնակցեց անցեալ տարուայ ընթացքում տեղի ունեցած մի քանի նշանաւոր յօբելեանների։

Բանաստեղծ և մանկավարժ Սմբատ Շահազիզի 35-ամեայ գրականական յօբելեանի առիթով Վարչութիւնը ուղարկեց նրան Ընկերութեան կողմից մի ուղերձ, որը յօբելեանի օրը հանդիսին ներկայացրել է Ընկերութեանս աշխատակից անդամ պ. Իսահակ Ժամհարեանը։ Բացի դրանից Վարչութիւնը որոշեց յօբելեանի օրը տալ մի գրականական-երաժշտական երեկոյթ ի պատիւ պ. Շահազիզի, որ և կայացաւ 1892 թ. ապրիլի 9-ին Թիֆլիզի ժողովարանում։

Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան տասնամեայ յոբելեանի առիթով Վարչութիւնս որոշեց իւր կողմից մասնակցել մի առանձին ուղերձով. ներկայացուցիչ էր հանդիսին Վարչութեան կողմից Վարչ. անդամ իշխ. տ. Ս. Թումանեան։

Հռչակաւոր գիտնական Պաստեօրի 70-ամեակի առիթով Ընկերութեանս կողմից ուղարկուեց առանձին շնորհաւորական հեռագիր և ցանկութիւն յայտնուեց այդ առիթով մի առանձին բրօշիւր հրատարակել Պաստեօրի արած գիւտերի մասին։

Ռափայէլ Պատկանեանի մահուան առիթով Վարչութեանս նախաձեռնութեամբ Թիֆլիզում կատարուեց հոգեհանգիստ և ուղարկուեց ցաւակցական հեռագիր հանգուցեալի ընտանիքին։

Նոյնպէս հոգեհանգիստ կատարուեց Ընկերութեանս կողմից Գարեգին եպիսկ. Սրուանձտեանի մահուան առիթով։

Հանգուցեալ Գրիգոր Արծրունու դագաղի վերայ Ընկերութեանս կողմից դրուեց առանձին պսակ այս վերնագրով. «Տպագրական խնջքի մեծ ներկայացուցչին»։

Վարչութիւնը իւր առանձին պարտքն է համարում յայտնել շնորհակալութիւն կազմարար պ. Եղիա Տէր-Խաչատրեանին, որը իւր վերայ էր վերցրել Ընկերութեանս բոլոր հրատարակութիւնների կազմը անելու մասամբ ձրիաբար մասամբ կէս գնով. և ամբողջ տարուայ ընթացքում նա կատարում էր ամենայն բարեխղճութեամբ այդ իւր յօժար ցանկութեամբ ստանձնած գործը։

Տեղոյս բոլոր հայ թերթերը Ընկերութեանս յայտարարութիւնները ամբողջ տարին տպել են ձրիաբար, ուստի որոշուեցաւ շնորհակալութիւն յայտնել բոլոր խմբագրութիւններին։

Նախագահ՝ *Ակ. Քալանթար*

Քարտուղարի պաշտօնակատար՝ *Յ. Քոչարեան*

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱՐԿՂԸ

(1892 թ. Մարտի 12—1893 թ. Յունուար 1.)

1892 թ. մարտի 12-ին Ընկերութեան դրամական գոյքը բաղկանում էր հետևեալ գումարներից.

Ա. Արևելեան 2-դ փոխառութեան 1000 ր. մի տոմսակ	921	60
Բ. Թիֆլիզի առևտրական բանկում ընթացիկ հաշուով	190	07
Գ. Վերցուած վճարների համար . . .	960	20
Ընդամենը	2071	87

ՄՈՒՏՔ

1) Անդամավճարներից (272 անդամներից) . .	1632	—
2) Գրքերի վաճառումից	2299	42
3) 2 մշտական անդամներից	200	—
4) Նուէր	450	54
5) Երեկոյթներից	831	52
6) Յատուկ գումար	60	40
Ընդամենը	5473	88
մնացորդի հետ միասին կլինի	7545	75

ԵԼՔ

1) Գրքերի հրատարակութեան համար . .	5156	04
2) Դիւանական ծախք և գրքերի ճանապարհածախք	842	41
Ընդամենը	5998	45

Մնացորդ առ 1 Յունուարի 1893 թ.

1) Արևելեան 2-դ փոխառութեան տոմսակ 1000 ռուբլի համարելով	1000	—
2) Յատուկ գումար	60	40
3) Ընթացիկ հաշուով Թիֆլիզի առևտրական բանկում	100	—
4) Առձեռն գումար	465	31
Ընդամենը	1625	71

Ծան. Բացի դրանից պէտք է ստացուի տոկոս 1) Առևտրական բանկի ընթացիկ հաշուից 10 ր. 22 կ. և 2) Արևելեան 2 փոխառ. 1000 ր. տոմսից 95 ռուբլի։

Թ. Հ. Գ. Հ. Ընկերութեան

ՄՇՏԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

1. Միքայէլ Թամամշեան
2. Յովհաննէս Թամամշեան
3. Իսահակ Ծովիանեան

} Թիֆլիզում։

4. Միքայէլ Ս.ամեան—Բաքուում
5. Իսահակ ժամհարեան—Մոսկվայում
6. Սմբատ Շահազիզ—Մոսկվայում

1892 թ. իսկական անդամներ.

Ա. ԹԻՖԼԻԶՈՒՄ

1 Աբազեան Աղէքսանդր
2 Աբեղեան Մանուկ
3 Աբովեան Մկրտիչ
4 Աբրահամեան Եսայի
5 Ադամեան Արշակ
6 Աթաբէկեան Ներսէս
7 Աթոյեան օր. Կատարինէ
8 Աղամիրզեան Յովհաննէս
9 Ամիրխանեան Յովսէփ
10 Անդրէասեան Աւետիք
11 Ամիրաղեան Բագրատ
12 Առաքելեան Համբարձում
13 Առաքելեան Դարչօ
14 Ասլամազեան Աղէքսանդր
15 Ասրեան Աւագ
16 Աստուածատրեան Յովհ.
17 Ատոմեան Արշակ
18 Արզումանեան Խոսրով
19 Արզումանեան Սմբատ
20 Արիստակէսեան Գրիգոր
21 Արզութեան իշխ. Բօրիս
22 Արզութեան իշխ. Մարիամ
23 Արզութեան իշխ. Սոֆիա
24 Արզութեան իշխ. Յովսէփ
25 † Արծրունի Գրիգոր
26 Արծրունի Վահան բժ.
27 Արասխանեան Աւետիք
28 Աւագեան Բէգլար

29 Աւագեան Վահան
30 Աւանեան Բարսեղ
31 Աւետիսեան Հայրապետ
32 Ափեան Նազար
33 Աքիմեան Գէորգ
34 Բագամեան Գրիգոր
35 Բալաղեան Սամուէլ
36 Բաղդասարեան Բագրատ
37 Բաղինեան Մնացական
38 Բարխուդարեան Անդրէաս
39 Բարսամեան Բարսեղ
40 Բալսամեան Վասիլ
41 Բարսեղեան Դաւիթ
42 Բենքլեան օր. Վարվառէ
43 Բէժանեան Եգոր
44 Բուղդանեան Իսահակ
45 Գալստեան Սահակ
46 Գասպարեան Մկրտիչ
47 Գարճելեան Յովսէփ
48 Գեօղալեան Աղէքսանդր
49 Գիւլնազարեան Կոստանդ.
50 Գրիգորեան Նիկողայոս
51 Գուլազեան Երեմիա
52 Դաստակեան Աբրահամ
53 Դոլուխանեան Մարկոս
54 Եարալեան Գրիգոր
55 Եարեան Գասպար
56 Եարվիլեան Լեւոն
57 Եարդուլեան Մինաս
58 Եզեկեան Աւետիք
59 Եսայեան Տիգրան
60 Երզնկեան Տէր Եղնիկ
61 Զաքարեան Աւագ
62 Զաւրեան Յովհաննէս
63 Զելինսկի Ստեփան
64 Էնֆիաճեան Արտաշէս
65 Թադէոսեան Արշակ
66 Թադէոսեան Յակոբ
67 Թումանեան իշխ. Մարիամ
68 Թումանեան Յովհաննէս
69 Թումեան Յովհաննէս
70 Թումեան Ստեփան
71 Իշխանեան Գաբրիէլ
72 Իշխանեան Միքայէլ
73 Խսպիրեան Աւետիս
74 Լոռիս-Մելիքեան Աննա օր.
75 Լոռիս-Մելիքեան Յովհ. բժ.
76 Լիսինեան Արտեմ
77 Խալաթեան Յովսէփ
78 Խանդամիրեան տ. Բալասան
79 Խանդամիրեան Գրիգոր
80 Խանդուլեան Մկրտիչ
81 Խաչատրեան Խաչատուր
82 Խաչատրեան Գէորգ
83 Խատիսեան օր. Նունէ
84 Խարազեան տիկ. Մարիամ
85 Խարազեան Սարգիս
86 Խիզանեան Յակոբ
87 Խոսրովեան Նիկողայոս
88 Խուդադեան Յովհաննէս
89 Խուդավերդեան Աղէքսանդր
90 Խուդավերդ. տիկ. Սրբուհի
91 Խօջայնաթեան Տէր Գրիգոր
92 Ծատուրեան Եփրեմ

93 Ծատուրեան Ստեփան
94 Ծատուրեան Տիգրան
95 Ծովեանեան Արշակ
96 Ծովեանեան Գրիգոր
97 Ծովեանեան Գէորգ
98 Ծովեանեան Յովհաննէս
99 Կարախանեան Կոստանդին
100 Կարապետեան Աղէքս. բժ.
101 Կարա-Մուրզա Մկրտիչ
102 Կրիտեան Միքայէլ
103 Համազասպեան Համզ. վր.
104 Հասրաթեան Եղիա
105 Ղադաքչեան Անտոն
106 Ղալումեան Ստեփան
107 Ղարագեօզեան Գրիգոր
108 Ղարագեօզեան Յարութ.
109 Ղարագեօզեան Տիգրան
110 Ղոնդաղսազեան Արշակ
111 Ղուկասեան Մելքոն
112 Ղուկասեան Մովսէս
113 Մալայեան Զաքար
114 Մալխասեան Ստեփան
115 Մամուլեան Սողոմոն
116 Մանդինեան Երուանդ
117 Մանթաշեան Աղէքսանդր
118 Մանուկեան Գրիգոր
119 Մանուէլեան Ստեփան
120 Մառանջեան Սմբատ
121 Մատինեան Մատթէոս
122 Մարգանեան Վլադիմիր
123 Մարուքեան Կարապետ
124 Մարտիրոսեան Տէր Յովհ.
125 Մեսոնիկեան Մկրտիչ
126 Մալումեան Խաչատուր
127 Մելեան Արշակ
128 Մելիք-Ադամեան Լևոն
129 Մելիք-Ազարեան Աղէքս.
130 Մելիք-Ալլահվերդեան Աղ.
131 Մելիք-Այվազեան Աղասի
132 Մելիք-Էյնաթեան Արսէն
133 Մելիք-Ղարագեօզ. Պօղոս
134 Մելքումեան Յովհաննէս
135 Մելիքեան Արշակ
136 Մեհրաբեան Արշակ
137 Միրիմանեան Յակոբ
138 Միրզոյեան Դաբրիէլ
139 Միրզոյեան Մարգար
140 Միրզոյեան Միքայէլ
141 Միրզոյեան օր. Նատալիա
142 Մուրադեան Գէորգ
143 Մուսինեան Յովհաննէս
144 Մովսիսեան Եղիա
145 Մովսիսեան Մարգար
146 Յակոբեան Գէորգ
147 Յակոբեան Վրդանէս
148 Յարութիւնեան Իսահակ
149 Յարութիւնեան Սարգիս
150 Յարութիւնեան Սողոմոն
151 Յովսէփեան Աղաբէգ
152 Յովսէփեան Յովսէփ
153 Նազարեան Առաքել
154 Նազարեան Տիգրան
155 Նազարէթեան Արամ
156 Նալբանդեան Միքայէլ

157 Նաւասարդեան բժ. Բագ.
158 Նուրալեան Բաղդասար
159 Նունուֆարեան Բաղդաս.
160 Շաթիրեան Մարտին
161 Շահբազեան Վահան
162 Շահլամեան Դաւիթ
163 Շահլամեան Յովհաննէս
164 Շահլամեան Ստեփան
165 Շահնազարեան օր. Սոֆիա
166 Շահումեան Գէորգ
167 Շահիկեան Աղէքսանդր
168 Շահպարոնեան Ադամ
169 Շարբարոնեան Կոստանդ.
170 Շիրազեան Խաչատուր
171 Չայգեշտեան Եգոր
172 Պռոշեան Պերճ
173 Ռոստոմեան Արտաշէս
174 Ռոտինեան Աղէքսանդր
175 Ռոտինեան Դաւիթ
176 Ռոտինեան Տիգրան
177 Սամարչեան Յովհաննէս
178 Սառաջեան Բագրատ
179 Սառաջեան Գրիգոր
180 Սարգսեան Մինաս
181 Սահակեան օր. Դարիա
182 Սիսակեան Պօղոս
183 Սկանդարեան Մնացական
184 Սողալեան օր. Նունէ
185 Սողոմոնեան Առաքել
186 Սողոմոնեան Սարգիս
187 Սունդուկեան Յովհաննէս
188 Սուրէնեան Աղէքսանդր
189 Սուքիասեան Գէորգ
190 Ստեփանեան բժ. Կարապ.
191 Ստեփանեան Յովհաննէս
192 Սպենդիարեան Յովհաննէս
193 Վահանեան Հմայեակ
194 Վարդազարեան օր Մար.
195 Վարդազարեան Փիլիպպոս
196 Վարդապետեան Աւետիք
197 Վարդանեան Փիլիպպոս
198 Վարդանեան օր. Մարիամ
199 Տէր-Գրիգորեան Բագրատ
200 Տէր-Գրիգորեան Արշակ
201 Տէր-Գրիգորեան Տէր Եղիշէ
202 Տէր-Աւագեան Նիկողայոս
203 Տէր-Աստուածատրեան Աղ.
204 Տէր-Միքայէլ. օր. Մատիլ.
205 Տէր-Խաչատրեան Արգամ
206 Տէր-Խաչատրեան Եղիա
207 Տէր-Խաչատրեան Խաչատ.
208 Տէր-Աւետիքեան Նիկող.
209 Տէր-Կարապետեան Յովհ.
210 Տէր-Ղազարեան Գրիգոր
211 ՏէրԻսրայէլեան Ստեփան
212 Տէր-Ղևոնդեան Արշաւիր
213 Տէր-Մարկոսեան Դաւիթ
214 Տէր-Մարկոսեան Յովսէփ
215 Տէր-Մարկոսեան Յովհան.
216 Տէր-Յակոբեան Յակոբ
217 Տէր-Յարութիւն. Գէորգ
218 Տէր-Յովհաննիսեան Ոսկի
119 Տէր-Յովսէփեան Յովսէփ
220 Տէր-Ոսկանեան Սմբատ

221 Տէր-Պետրոսեան Եգոր
222 Տէր-Պետրոսեան Գրիգոր
223 Տէր-Սարգսեան Յովհան.
224 Տէրտէրեան Արտաշէս
225 Տէրտէրեան օր. Նատալիա
226 Փանեան Մարգար
227 Փարեշեան Սիմէօն
228 Քալանթար Աղէքսանդր
229 Քալանթարեան Արտեմ
230 Քալանթարեան Պետրոս
231 †Քալանթարեան Քրիստ.
232 Քոչարեան Յակոբ
233 Օքոյեան Յարութիւն

Բ. ՕՏԱՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

Աստրախան.

Սօֆիա Փանեան

Ախալցխա.

Զալալ Տէր-Գրիգորեան
Կարապետ Մարուքեան

Ախալքալաք

Զարմայր Առվանեան
5 Արշակ Գրիգորեան

Ազուլիս (Վերին)

Օր. Դարիա Գոլոշեան
Կատարինէ Դերբինեան
Հռիփսիմէ Տէր-Մկրտչեան
Ստեփան Գասպարեան
10 Սարգիս Յակոբեան

Բաթում.

Բժ. Թադէոս Զաքարեան

Բաքու.

Ադամեան Սօֆիա
Ադամեան Հեղինէ
Սրամեան Եղիսաբէթ
Առաքելեան Նադեժդա
15 Առաքելեան Սօֆիա
Բէկլարեան Սաթինիկ
Բուդաղեան Սմբատ
Գալստեան Աստուածատուր
Իւզբաշեան Մարիամ
20 Թումայեան Թագուհի
Թումանեան Եղիսաբէթ
Թումանեան Մարգարիտ
Լալազարեան Արշակ
Կրասիլնիկեան Եղիսաբէթ
25 Կրասիլնիկեան Հեղինէ
Կրասիլնիկեան Արսէն
Ղուկասեան Եւգենիա
Մադաթեան Անանման
Մելիքեան Մարիամ
30 Յակոբեան Սոլան
Նաբաթեան Մարիամ
Շագեղանեան Զամբաղ
Շխեան Բագրատ
Պահլաւունի Գայիանէ
35 Սարգսեան Եղիսաբէթ
Սարգսեան Մարիամ
Սուլխանեան Ստեփան
Տէր-Մարգարեան Գասպար
Քոչարեան Հայրապետ

Գրոզնի.

40 Բժ. Եգոր Թադէոսեան

Գորի.

Գալուստ Ստեփանէ

Դերբենդ.

Օր. Աննա Սահակեան

Դիլիջան

Նիկողայոս Աղամեան
Գրիգոր Ասլանեան
45 Վահան Մատինեան
Միքայէլ Ձիթողցեան
Աղէքսանդր Սերեբրակեան
Օհան Քեանդարեան

Երեւան

Գէորգ Ահարոնեան
50 Բագրատ Արտազեան
Մկրտիչ Մուսինեան
Արտեմ Պապաջանեան
Արմենակ Վարդանեան բժ.
Յովհաննէս Մելիքեան
55 Բարսեղ Եղիազարեան
Աղէքսանդր Առաքելեան
Մեսրոպ քահ. Մելեան

Նլիսաւետպոլ

Բժ. Մինաս Թէմուրեան
Սիմէոն Շխեան
60 Յովսէփ Մելիք-Բէգլարեան
Մարտիրոս Նաբաթեան

Նուպատորիա

Յովհաննէս Պարոնեան

Էջմիածին.

Արշակ Կարապետեան
Լեւոն աբեղայ Խօջայեան
65 Գարեգին սար. Յովսէփեան

Թբիլիսի.

Ինժ. Գրիգոր Աղաբաբեան

Հին Նախիջեւան.

Կարապետ Ադամեան

Ղարս.

Խորէն քահ Ստամբոլցեան

Ղարաքիլիսա

Սօսի Արսէնեան
70 Աղէքսանդր Աբոյեան
Սիսակ Աղասեանց
Յովհաննէս Էդիգարեան
Մատթէոս Խաչատրեան
Խորէն քահ. Խանզատեան
75 Արամ Խանաղեան
Աղէքսանդր Նալբանդեան
Անտոն Քէքեջեանց
Առաքել Ղուլեան

Ղուբա.

Լեւոն Մելիք-Դաւայեան

Մոսկվա.

80 Մկրտիչ Բարխուդարեան
Մկրտիչ Թանդեան
Թոմաս Թումանեան
Մինաս Լազարեան
Եգոր Կարոտկով
85 Նիկողայոս Կազաչկով
Ակսենտ Մասլով

Մկրտիչ Մելիքեան
Ներսէս Ներսիսեան
Յովհաննէս Տէր-Յակոբեան

Նուխի.

90 Արշակ Բէնքլեան

Շամախի.

Մեսր. արքեպիս. Սմբատ.
Սամսոն Յարութիւնեան

Շուշի.

Առ. Բաբախանեան (Լէօ)
Լեւոն Սարգսեան
95 Արշակ Բարխուդարեան

Շուլաւէր

Բժ. Յովհան. Անանեանց

Պողոսքիլիսա.

Արշակ Անանեան
Բէկլար Մարտիրոսեան
Սարգիս Մելեան

Սամարղանդ.

100 Ցրէյդուն Փիրումեան

Ս. Պետերբուրգ.

Սողոմոն Աշխարումեան
Քրիստափոր Բաշինջաղեան
Արտաշէս Բուդուղեան բժ.
Գոռեան Սարգիս
105 Նիկողայոս Թաղիանոսեան
Նիկողայոս Իզմիրեան
Կարապետ Ճարակեան
Աւետիս Ճգնաւորեան
Ստեփան Ներսիսեան
110 Արտաշէս Շխեան
Ստեփան Տիգրանեան
Վարդան Վարդանեան բժ.
Վարդան Վարդանեան
Աւետիս Քալանթար

Ռիգա.

115 Նունէ Ղամբարեան տիկ.

Օդեսսա.

Գրիգ. քհ. Խորասանճեան
Միքայէլ Մուրադեան
Օդէսայի Հայ ուսանողութ.

1892 Թ.

ԱՇԽԱՏԱԿԻՑ ԱՆԴԱՄՆԵՐ

Աստրախան	Թովմաս Փանեան
Ախալցխա	Այվազեան
Ախալքալակ	Զարմայր Առվանեան
	Արշակ Գրիգորեան
Ագուլիս (վերին)	օր. Դարիա Գոլոշեան
Արդահան	Մ. Տէր-Սիմէոնեան
Ալէքսանդրապոլ	Յակոբ Տէր Պողոսեան
Արմաւիր	Գաբրիէլ քահ. Թուելեան
Բաթում	Առաքել Սարուխանեան
Բաքու	տիկ. Եղիսաբէթ Սարգսեան
	տիկ. Եղիսաբէթ Կրասիլնիկեան
	Արսէն Կրասիլնիկեան
Գրոզնի	բժ. Եգոր Թադէոսեան
Դերբենդ	օր. Աննա Սահակեան
Դիլիջան	Աղէքսանդր Սերեբրակեան
Երևան	Միքայէլ Պապաջանեան
Ելիսավետպոլ	Մարտիրոս Նաբաթեան
	Սիմէոն Շեխեան
Զաքաթալա	Աւետիս Դաւթեան
Էջմիածին	Յովհաննէս Սաղաթելեան
	Տիգրան Գեոզալեան
Հին Նախիջևան	Կարապետ Ադամեան
Ղարս	բժ. Աղէքսանդր Ղազազեան
	Սեդրակ Գրիգորեան
Ղարաքիլիսա	Առաքել Ղուլեան
Ղարասուբազար	Յովհաննէս Սելինեան

Ղուբա	Լևոն Մելիք-Դադայեան
Մեղրի	Աւետիս Վաչեան
Մոսկվա	Իսահակ Ծամհարեան
Նոր-Բայազետ	Ստեփան Բատիկեան
Նուխի	Արշակ Բէնքլեան
Շամախի	Մեսրոպ արք-եպիսկոպոս
	Սամսոն Յարութիւնեան
Շուշի	Դայիանէ Աթաբէկեան
	Լևոն Սարգսեան
Ս. Պետերբուրգ	Քրիստափոր Բաշինջաղեան
Ստաւրոպոլ	Նիկիտ Միխայլովիչ Դեաչկով
Փոթի	Յակովբ քահ. Խուցեան
Օդեսսա	Միքայէլ Մուրադեան

ՆԱԽԱՀԱՇԻՒ 1893 Թ.

ՄՈՒՏՔ

		Ր.	Կ.
1)	Արևելեան երկրորդ փոխառութեան հազար ռուբլիանոց մի տոմսակ	1000	—
2)	Յատուկ գումար	60	40
3)	Սպասելիք տոկոս	105	22
4)	Թիֆլիզի առևտրական բանկում ընթացիկ հաշուով	100	—
5)	Առձեռն գումար	465	31
6)	Անդամավճարներից	1200	—
7)	Գրքերի վաճառումից	2000	—
8)	Երեկոյթներից	700	—
9)	Նուէրներից և այլ հասոյթներից . . .	200	—
	Ընդամենը	6730	93

ԵԼՔ

1)	Պահեստի համար	1000	—
2)	Յատուկ գումար	60	40
3)	Գրքերի տպագրութեան	4680	53
4)	Դիւանական ծախք		
	ա) Գրասենեակի	300	—
	բ) Գրասենեկապետի . . .	240	—
	գ) Գրքեր ուղարկելու . . .	200	—
	դ) Վառելիք և այլ ծախքեր . .	100	—
	ե) Անակնուելի ծախքեր . .	150	—
	Ընդամենը	6730	93

Ծանօթ. Մուտքը աւելացած դէպքում աւելորդ գումարը կարելի է ծախսել գրքերի տպագրութեան համար։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ

1892 Թ. ՄԱՐՏԻ 29-Ի ՄԻՆՉԵՒ 1893 Թ. ՅՈՒՆՎ. 1-Ը

Խմբագրական Մասնաժողովը այս տարեշրջանում—մօտ տասն ամսվայ ընթացքում—ունեցել է 24 նիստ։ Ամառվայ երեք ամիսների ընթացքում նիստեր չեն կայացել անդամների շատերի քաղաքից բացակայ լինելու պատճառով։ Սեպտեմբերից սկսած տեղի ունեցած 14 նիստերին պ. պ. Լ. Սարգսեան և Ս. Բարխուդարեան ներկայ չեն եղել Թիֆլիզից հեռացած լինելով։ Բացի դրանից չէ կայացել եօթն նիստ անդամների թիւը կանոնադրութեան § 28-ով պահանջած 5-ից պակաս լինելու պատճառով։

Առաջին կիսամեակում ատենապետի պաշտօնը վարել է պ. Լ. Սարգսեան, իսկ վերջին կիսամեակում պ. Յ. Տէր-Մարկոսեան։ Քարտուղարի պաշտօնը վարել է Ս. Բալաղեան։

Խմբագրական Մասնաժողովը այդ ժամանակամիջոցում զբաղվել է հետևեալ գրքերով.—

ՍՏԱՑՎԵԼ և ՔՆՆՎԵԼ ԵՆ

1) Մտաւոր, բարոյական և ֆիզիքական կրթութիւն, Սպենսերի. թարգմ. Մ. Ղազարեանի։

2) Ջաւախքի բուրմունք, ժողովրդագրական նիւթեր, գրի առաւ Ե. Լալայեան։

3) Հողի մշակելը, Ս. Բալաղեանի։

4) Նախընթաց օրը, Տուրգենեվի, թարգմ. Ե. Ղազարեանի։

5) Նաւապետ Ֆօրստերի առաջին նաւարկութիւնը։

6) Տարաս-Բուլբա, Գոգոլի, թարգմ. Մ. Աբեղեանի։

7) Վիտօ Սավա Բրանկովիչ, Զմա Իվան Իվանովիչի, թարգմ. Տ. Ս.

8) Փշրանքներ, ժողովրդագրական նիւթեր, հաւաքեց Գարեգին Սարկաւագ Յովսէփեանց։

9) Կանանց արդի հանդերձանքի վատառողջութիւնը, Սոլովիեվ, թարգմ. Տէր-Մարտիրոսեանի։

10) Մանուկների հոգատարութիւնը, բժ. Պոկրովսկու, թարգմ. բժ. Թ. Զաքարեանց։

11) Սամայ ծռեր, գրի առաւ Գարեգին Սարկաւագ։

12) Վայրենի կալուածատէր, Շչէդրինի։

13) Խան-Միրան, Սէյլանի։

14) Մակբէթ, Շէքսպիրի, թարգմ. Մալխասեանի։

15) Շինել, Գոգոլի, թարգմ. Ե. Թաղիանոսեանի։

16) Լուկի Լարաս, Վիկելայի, թարգմ. Վիրապեանի։

17) «Զ. Դարվին», Էնգելգարտի, թարգմ. Մուսաբէգեանի։

18) Պոլոժենիէ հայ-լուսաւորչական եկեղեցու օրէնսդրութիւն, թարգմ. Ա. Բարխուդարեանի և Մ. Ասլեանի։

19) Ամենալաւ բանը աշխարհում, Հենրի Դրումոնցի, թարգմ. Կ. Ս.

20) Փորձանքների բժշկարան, Բաւուլ Բրօքէրի, թարգ. Ք. Օհանեանի։

21) Երկու քոյր, Ղ. Աղայեանի։

22) Դասատեր կրօնի, Կ. Մալխասեանի։

23) Երջանկութիւն և աշխատանք, պրոֆ. Մոնտեգացցի, թարգմ. Թ քահանայ Ատոմեանի։

24) Խարազի տղայ, գրի առաւ Ս. Քամալեան։

25) Լաւ և վատ ընկեր, Կ. Խանազեանի։

26) Արևելեան ազգերի քաղաքակրթութեան պատմութիւնը, Վ. Փափազեանի։

27) Մի քանի խօսք ամուսնութեան մասին, Ա.թանասեանի։

28) Հաջի բաբա, Մորիերի, թարգ. Ոսկան Տէր-Յովհաննիսեանի։

29) Ոսկի ժամացոյց, Շիրակեցու։

30) Սիֆիլիս, Դոքտոր Վահէի։

31) Գիւղում, Մ. Տէր-Սարգսեանի։

32) Սիրոյ պօէզիա, Զելֆիղարի։

33) Եգիպտացւոց թագաւորի աղջիկը, Էբէրսի, թարգ. Գ. Շահբուդաղեանի։

34) Նարգիզ գիւլ, Ա. Տէր-Սիմոնեանի։

35) Ծրագիր ժողովրդական գրականութեան ուսումնասիրութեան. Ա.Ն. Քալանթարի։

36) Խրիմեան Հայրիկ, Լէօի և Հ. Առաքելեանի։

37) Հանրամատչելի ընախօսութիւն, Վ. Լունկեվիչի։

38) Լուի Պաստեոր, Ս. Բալաղեանի և Ա.լ. Քալանթարի։

39) Պոլտավա, Պուշկինի, թարգ. Ա.. Զոբանեանի։

40) Խուն-Խոր, Թրքահայերի կեանքից, Կ. Ղազարեան։

41) Սպիչկա, եղերական վէպ, Կ. Մանուկեանի։

42) Մոքոս, ժողովր. նիւթեր, գրի առաւ Ս. Հ.

43) Ի՞նչ է խօսում սենեակը, Աւենարիուս, թարգ. Գ. Վանցեանի։

44) Գութան, ժողովրդ. նիւթեր, հաւաքեց Ս. Հ.

45) Գիւղացու հայեացքը գաղղիացու վերայ, Ա. Մելիք-Շահնազարեան։

46) Ապահունեաց գաւառի հարսանիքը, Ս. Հ.

47) Սասուն, Սէյլանի։

48) Սասմայ ծռեր, Գարեգին Սարկաւագի։

49) Զօրականի որդին, Պ. Մոճուռեանի։

50) Պատկերներ Գարիբալդիի կեանքից, թարգ. Խ. Մաս.

51) Առակներ, պրոֆ. Տօպէլիուսի, թարգ. Տ. Մ.

52) Ճշմարտութիւնը յաղթող է, թարգ. Տ. Գ.

Խմբագրական Մասնաժողովը իւր կողմից ընտրել է

53) Դրախտի ընտանիք, Խրիմեան Հայրիկ։

54) Սիրաք և Սամուէլ, Խրիմեան Հայրիկ։

55) Տնտեսագիտական զրոյցներ (ռուսերէնից թարգ.)
56) Տիեզերագրութիւն, Ֆլամմարիոնի։
57) Քննական պատմութիւն հայոց, I և II հատոր, Գաբագաշեանի։

Այս գրքերից Մասնաժողովի կողմից յարմար են դատված տպագրութեան համար

1) Տարաս-Բուլբա, 2) Փշրանքներ, 3) Խան-Միրան, 4) Մակբէթ, 5) Փորձանքների բժշկարան, 6) Երկու քոյր, 7) Սասմայ ծռեր, 8) Դրախտի ընտանիք, 9) Սիրաք և Սամուէլ, 10) Ձաւախքի բուրմունք, 11) Մտաւոր, բարոյական և ֆիզիքական կրթութիւն, 12) Մանուկների հոգատարութիւնը, 13) Պոլոժենիէ, 14) Խարազի տղայ, 15) Եգիպտացւոց թագաւորի աղջիկը, 16) Հանրամատչելի բնախօսութիւն, 17) Լուի Պաստեօր, 18) Պատկերներ Գարիբալդիի կեանքից, 19) Տնտեսագիտական զրոյցներ, 20) Տիեզերագրութիւն, 21) Քննական պատմութիւն։

Դեռ վերջնական որոշում չէ կայացրած հետեւեալների մասին.

1) Հաջի-բաբա, 2) Շինել, 3) Ծրագիր ժողովրդական գրականութեան ուսումնասիրութեան, 4) Խրիմեան Հայրիկ, 5) Խուն-խոր, 6) Մօքոս, 7) Գուրթան, 8) Գիւղացու հայեացքը գաղղիացու վերայ, 9) Ապահունեաց գաւառի հարսանիքը, 10) Սասուն, 11) Ձօրականի որդին, 12) Առակներ պրոֆ. Տօպէլիուսի, 13) Հողի մշակելը։

Մերժված են, մի քանիսը լեզուի, մի քանիսը բովանդակութեան պատճառով հետեւեալները.—

1) Նախընթաց օրը, 2) Նաւապետ Ֆօրստերի առաջին նաւարկութիւնը, 3) Վիտօ-սավա Բրանկովիչ, 4) Կանանց արդի հանդերձանքի վատառողջութիւնը, 5) Վայրենի կալուածատէր, 6) Լուկի լարաս, 7) Զ. Դարվին, 8) Ամենալաւ բանը աշխարհում, 9) Դասատեր կրօնի, 10) Երջանկութիւն և աշխատանք, 11) Լաւ և վատ ընկեր, 12) Արևելեան ազգերի քաղաքակրթութեան պատմութիւնը, 13) Մի քանի խօսք ամուսնութեան մասին, 14) Ոսկի ժամացոյց, 15) Սիֆիլիս, 16) Գիւղում, 17) Սիրոյ պօէզիա, 18) Նարգիզ գիւղ, 19) Պոլտավա, 20) Սպիչկա, 21) Ձմարտութիւնը յաղթող է, 22) Ի՞նչ է խօսում սենեակը։

Խմբագրական Մասնաժողովը 'ի միջի այլոց հետեւեալ որոշումներն է կայացրել.

1) Հրատարակել ցուցակ գրքերի, և առաջարկել գրողների ու թարգմանիչների ուշադրութեան։

2) Պատրաստել և տպագրել մի ծրագիր ժողովրդագրական նիւթեր հաւաքելու համար, իբրև ուղեցոյց ժողովրդի կեանքը ուսումնասիրել ցանկացողների։

3) Հաւաքել, թէ հայոց գրականութեան և մամուլի և թէ եւրոպական գրականութեան մէջ եղած նիւթերը հայաբնակ տեղերի տնտեսական և աղգագրական վիճակի մասին և մաս մաս տպագրել։

4) Ձեռնարկել Հայոց յայտնի գրողների աշխատասիրութիւնների լիակատար ժողովածուի տպագրութեան, սկսելով Աբովեանից, Պէշիկթաշլեանից և այլն։

5) Ձեռնարկել գիտական-ժողովրդականացրած գրքերի հրատարակութեան, որոշ ծրագրով։ Արդէն պատրաստվում են խօլերայի և սիֆիլիսի մասին հանրամատչելի բրոշիւրներ։

6) Թարգմանաբար հրատարակել օրէնքի այլ և այլ մասերը, որ համեմատաբար կարևոր են ժողովրդի առօրեայ կեանքի համար. ինչպէս օրինակ—Զինուորագրական կանոնա-

գրութիւնը, Գիւղական դատավարութիւնը, Հաշտարար դատարանը, Ակցիզային կանոնները, Զրաբաշխական կանոնները, և այլն։

7) Ձեռնարկել մի լիակատար Ռուս-Հայերէն բառարանի պատրաստութեան և հրատարակութեան։

Ընդհանուր ժողովի պարապմունքները Մարտի 14 1893 թ.

1) Անցեալ ընդհանուր ժողովների արձանագրութեան ընթերցումը.

2) Ընկերութեան 1892 թւի գործունէութեան տեղեկագրի ընթերցումը։

3) Հաշւի ընթերցումը,

4) Նախահաշւի քննութիւնը,

5) Պաշտօնատար անձերի ընտրութիւնը։

Վարչութեան Նախագահի
Փոխ Նախագահի
Քարտուղարի
Գրագահի
Մի անդամի,
Խմբագրական մասնաժողովի չորս անդամների։

Ծանօթութիւն. Քարտուղարը պէտք է ընտրուի մի տարով։

Հրատարակութեան տարին	Համարը	Հրատարակած գրքերի ցուցակը	Գրքի գինը Ռ.	Գրքի գինը Կ.	Ողբան օրինակ է տրված	Որքան օրինակ պահեստում է 1 մարտի 1892	Ա. 1 յունվ. 1893 թուի Պահեստում եղած գրքերը	Գրավաճառների մոտ	Գաւառներում	Ընդհանուր արժէքը Ռ.	Ընդհանուր արժէքը Կ.	Ընդամենը տուած գրքերը	Գրքավաճառներին նուիրած գրքերը	Հատուցման գրքերը
1879	1	Թաւամազ մեղու	—	40	1300	6	4	73	2	31	60		1	2
1880	2	Կարմիր լապտեր	—	50	750									
		Նոյնը առանց կազմի	—	30	750	2	2	93	1	49	—			
	3	Թոմաս եղբօր տնակը	—	60	500	3	45	290	—	87	—			
		Նոյնը առանց կազմի	—	45	1030	64	638	57	—	61	20	15	5	
	4	Մանկական երգեր, Գամ.-քաթիպայի	—	25	590	-	2	36	33	318	15			
		Նոյնը առանց կազմի	—	15	1900	73	742	29	—	7	75			
	5	Մորեխ և նրա չնչելու հնարները	—	10	1200	11	137	18	24	117	60	4	5	2
	6	Նեղ և խոնաւ բնակարանների մասին	—	10	1200	-	—	9	52	19	80	3	1	
1881	7	Մովսէս Խորենացի	—	80	1200	2	230	459	—	45	90			
	8	Ձեռնարկ գործ. տնտեսութեան, Մորիս Բլոքի	—	50	1200	9	938	121	25	300	80	13	7	
	9	Ռոբինզոնի պատմութիւն	—	60	1200	5	526	7	1	473	—	2	5	
	10	Գամ.-քաթ. բանաստեղծութիւններ	—	50	3600		2	55	16	358	20	11	6	7
1882	11	Ուխտաւորը, Հաուֆի	—	75	600	2	239	—	—	—	50			
	12	Գառնուկ և Լուսատակ	—	25	600	-	—	20	32	218	25	2	6	
	13	Սայեաթ-Նովա	—	5	1200	6	622	376	—	94	—			
	14	Ծննդեան պատմութիւնը և մայիսեան տօնը Ֆինլանդիայում	—	10	600		285	99	28	30	45	10	6	2
	15	Ադաթանգեղոս	1	—	1200	8	830	59	33	37	70	5	5	
1883	16	Գիւղական խալֆայ	—	50	1200	8	787	37	6	873	—	14	7	
1885	17	Վանայ սազ	—	75	613	4	391	19	34	420	—	5	6	2
	18	Փնջիկ	—	20	613	3	350	29	—	315	—	2	7	1
	19	Նամուս	1	—	700	2	204	49	23	84	40	5	6	
	20	Ասոդիկ պատմութիւն տիեզերական	2	—	700	4	389	35	12	251	—	13	7	2
1886	21	Թիֆլիսեցոց մտաւոր կեանքը	1	50	1100	8	875	68	3	920	—	7	7	2
		Նոյնը ընտիր թղթի վերայ	2	50	100	-	—	48	12	1402	50	6	7	
1887	22	Ղևոնդ պատմագիր	2	—	690	4	471	15	—	37	50			
1888	23	Սրբազան պատմութիւն Սահ. քահ. Սահակեանի աշակերտների համար	—	30	3585		2	61	3	1070	—	8	7	1
	24	Նոյնը ուսուցիչների համար	1	75	680	2	237	22	—	7	20		7	
1889	25	Սոկ ատէս	-	10	1200	2	139	32	—	470	75		5	
1890	26	Գալատեան, պատմութիւն հայոց	1	50	2540		330	78	152	36	90	16	7	
	27	Շերամապահութիւն	—	40	1200	7	692	563	138	1546	50	89	7	13
1891	28	Ժամանակագրութիւն Հայոց, Ց. Դարդելի	1	25	700		21	290	18	400	—	11	5	1
	29	Վարդ Ռեսլի, Սպիրի	—	10	1200	5	546	477	4	627	50	11	2	1
	30	Նալ և Դամայեանթի, Ֆ. Շմիդտի	—	20	1200	6	537	280	144	97	—	8	3	1
	31	Ատուած գիտէ արդ. ու մեղաւորը	—	7	1200	5	522	263	149	189	80	13	6	1
	32	Հաւատարիմ Սավիարին	—	10	1200	5	396	242	127	62	37	16	6	16
	33	Լինհարդ և Գերտրուդ, Հ. Պեստալոցի	—	25	1200	45	415	253	188	83	70	12	6	2
	34	Ցաւելուած ի գիրս պատմութեան Ասողկան	—	20	189	13	129	449	124	247	—	20	6	2
	35	Նաւի փոքրաւորը	—	15	1200	24	281	26	3	31	60	1	1	
	36	Ուռենց Յովսէփ	—	15	1200	23	67	720	122	168	45	16	6	2
	37	Մեծապատիւ մուրացկաններ, Պարոնեանի	—	40	1200	21	156	685	146	134	70	14	6	1
	38	Ադդային ջրեր	1	—	1200	428	396	287	330	309	20	75	7	10
	39	Բը—ա—բա	—	15	1200	671	348	221	231	848	—	95	8	14
	40	Շնիկ	—	5	1800	361	236	342	338	154	20	54	7	34
	41	Շէնգրինի երեք զրոյցներ	—	10	1200	418	224	329	1018	81	65	36	8	6
	42	Տարասկոնցի Տարտարէնը	—	40	1200	560	391	425	414	106	30	30	8	2
	43	Օրլէանի կոյս	—	25	1200	443	283	425	235	420	40	46	8	1
1892	44	Արարատեանի կեանքը *)	—	75	978		337	312	452	261	75	35	7	2
	45	Գաղափարական քահանայ	—	75	1200		484	321	152	607	50	156	8	2
	46	Ընտանիքի ոյսը	—	10	1200		338	290	172	709	50	191	7	6
	47	Հոսհոսի ձեռատետր. Պոյտ մը, Ց. Պարոնեանի	1	—	1200		416	281	324	94	30	163	7	
	48	Քիմիա, Բոսկոյի	—	40	1200		731	500	142	1058	—	97	8	12
	49	Շէնգրինի երեք վէպիկներ	—	15	1200		626	300	83	445	60	66	9	
	50	Սասնայ ծռեր	—	50	800		211	348	120	164	10	59	9	2
	51	Ջաւախքի բուրմունք	—	25	800		239	400	117	364	—	35	9	3
	52	Սպենսերի, դաստիարակութիւն	1	—	800		214	400	100	184	75	30	9	4
	53	Մոռան	—	20	2400		145	400	91	705	—	55	9	5
	54	Խան. Միրան, Սէյլանի	—	20	1200		424	1000	191	467	20	36	9	2
	55	Ցարատեղեր	—	40	1200		397	600	125	229	80	26	8	8
	56	Փշրանքներ, Գարեգին սարկաւագի	—	50	800		478	600	127	449	20	44	9	2
	57	Երկու քոյր, Գ. Ազայեանի	—	25	1800		538	300	—	386	50	1		
	58	Խրիմեան Հայրիկ, Դրախտի ընտանիք	—	60	1200		163	1000	187	431	25	32	8	4
	59	Նոյն, Սիրաք և Սամուէլ	—	50	1200		152	500	468	678	60	74	7	11
	60	Փորձանքների բժշկարան	—	20	1200		625	500	482	567	—	76	7	4
	61	Մակբեթ, Շէկսպիրի	—	50	1200		638	400	126	230	20	16	2	5
								400	106	572	—	27	2	4
										22,253	07			

1892 թ. մարտի 1-ին հրատարակած գրքերը

Ընդհանուր գումարը . . . 22,253 07

*) «Արարատեանի կեանքը» գրքից ստացուել է Տ. Նալբանդեանի տպարանից միայն 978 օր., իսկ մնացած 222 օր. մինչև օրս չի ստացուած, և այդ հարցը դեռ ուսկան է մնացել:

ՀՅ ազգային գրադարան
NL00832021
2013